ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
07 օգոստոսի 2018թ. N 31

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին օրենքի" 12-րդ հոդվածի պահանջներով

Իջևան համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը

1. Համայնքի ավագանու անդամ Տիգրան Թամրազյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին
2. Իջևանի համայնքապետարանի հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու մասին
3. ,,Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն,, հիմնարկում անասնաբույժի հաստիք ավելացնելու մասին
4. Իջևան համայնքի վարչական տարածքում գտնվող բնակելի կառուցապատման հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխությանը հավանություն տալու մասին
6. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխությանը հավանություն տալու մասին
7. Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին որոշելու մասին
8. Քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնակամ շինությունների եվ ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ	ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ	ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Աշխատակազմի քարտուղար՝ Բ.ԹԱՆԱՆՅԱՆ

Արձանագրություն *07 օգոստոսի 2018թ.*

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Իջևան համայքնի ավագանու անդամ Տիգրան Թամրազյանը զբաղեցնում է ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն, ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և նույն հոդվածի 2-րդ մասով, Իջևան համայնքի ավագանու անդամ Տիգրան Թամրազյանի լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարեցված, սկսած ս/թ օգոստոսի 7-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Աշխատակազմի քարտուղար՝ Բ.ԹԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Իջևան քաղաքային համայնքի ավագանի

ՈՐՈՇՈՒՄ

07 օգոստոսի 2018թ. N 32 Ա

2.ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ համայնքի տարածքում գործող համայնքային ենթակայության 11 հիմնարկներում գնումների գործընթացի կազմակերպումը բարելավելու, գնումները ՀՀ ,,Գնումների մասին,, օրենքի պահանջներին համապատասխան անցկացնելու նպատակով, անհրաժեշտություն է առաջացել համայնքապետարանի աշխատակազմում կատարել փոփոխություն՝ առաջատար մասնագետի մեկ հաստիքը կրճատել և փոխարենը ավելացնել գլխավոր մասնագետի մեկ հաստիք:

Անհրաժեշտություն է առաջացել նաև իրավաբանի հաստիքը կրճատել և փոխարենը ավելացնել խորհրդականի մեկ հաստիք:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում կատարել հետևյալ փոփոխությունները .

ա/ Կրճատել իրավաբանի հաստիքը և ավելացնել համայնքի ղեկավարի խորհրդականի մեկ հաստիք՝ 150000 ՀՀ դրամ դրույքաչափով:

բ/ Կրճատել աշխատակազմի առաջատար մասնագետի մեկ հաստիքը և ավելացնել գլխավոր մասնագետի մեկ հաստիք՝ համապատասխան դրույքաչափով:

2. Հաստատել Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն 1-2 հավելվածների:

3. Ուժը կորցրած ճանաչել Իջևանի քաղաքային համայնքի ավագանու 22 դեկտեմբերի 2017թ. «Իջևանի համայնքապետարանի, ենթակա բյուջետային հիմնարկների ու ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակների և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին» թիվ 66Ա որոշումը՝ համայնքապետարանի մասով:

4. Իջևան համայնքի ղեկավարին՝ Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

5. Սույն որոշման 1-ին մասի բ/ կետն ուժի մեջ է մտնում Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ	ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ	ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Աշխատակազմի քարտուղար՝ Բ.ԹԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Իջևան քաղաքային համայնքի ավագանի

ՈՐՈՇՈՒՄ

07 օգոստոսի 2018թ. N 33

3.,,ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ,, ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԻ ՀԱՍՏԻՔ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքում իրականացվող անասնաբուժական ծառայության գործունեության կազմակերպումը բարելավելու նպատակով և ի կատարումն ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարի 12.04.2018թ թիվ 01/16.1/2268-18 հանձնարարականի, ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 50 հոդվածի 2-րդ կետով և 18-րդ հոդվածի 28-րդ կետով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝

«Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն» հիմնարկի հաստիքացուցակում ավելացնել անասնաբույժի հաստիք 0,5 դրույքով՝ , աշխատավարձի չափը սահմանել 36371 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ	ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ	ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Աշխատակազմի քարտուղար՝ **Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Իջևան քաղաքային համայնքի ավագանի

ՈՐՈՇՈՒՄ

07 օգոստոսի 2018թ. N 34

4.ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Արցախյան փողոցում գտնվող 179.86քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0043-022/, 262.4քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0043-023/, 106.54քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0043-021/ և Մեհրաբյան փողոցում գտնվող 354.8քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0161-0019/, 119.7քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0161-0010/ հողամասերը կադաստրային քարտեզում արտացոլված են, որպես ֆիզիկական անձանց պատկանող բնակելի կառուցապատման հողամաս, սակայն որևէ անձի անվամբ հաշվառված չեն և դրանց նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք գրանցված չեն:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Արցախյան փողոցում գտնվող 179.86քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0043-022/, 262.4քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0043-023/, 106.54քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0043-021/ և Մեհրաբյան փողոցում գտնվող 354.8քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0161-0019/, 119.7քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0161-0010/ հողամասերի նկատմամբ Իջևան համայնքի սեփականության իրավունքը գրանցելուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ	ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ	ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Աշխատակազմի քարտուղար՝ Ք.ԹԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Իջևան քաղաքային համայնքի ավագանի

ՈՐՈՇՈՒՄ

07 օգոստոսի 2018թ. N 35

ՆԱԽԱԳԻԾ

5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմեն Ալբերտի Բալդրյանին, իրեն սեփականության իրավունքով պատկանող, Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի 3/37 հասցեի 0.004հա մակերեսով հողամասում առևտրի սրահ կառուցելու նպատակով, Իջևանի քաղաքապետարանի կողմից 12.08.2011թ տրամադրվել է N22 շինարարության թույլտվություն: Սակայն շինարարական աշխատանքներն իրականացվել են նախագծային փաստաթղթերի շեղումներով և ինքնակամ կերպով զբաղեցվել է համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նպատակային նշանակության և ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակության 0.00165հա մակերեսով հողամաս /11-001-0111-0001-01 ծածկագրով հողամասի մի մաս/: Արմեն Ալբերտի Բալդրյանին պատկանող 0.004հա մակերեսով և համայնքային սեփականության 0.00165հա հողամասերում կառուցված շինությունը համարվում է կոնստրուկտիվ իրարից անբաժանելի մեկ միասնական համակարգ: ՀՀ կառավարության 2006թ նոյեմբերի 30-ի թիվ 1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի գլխավոր հատակագծում նույնպես ինքնակամ շինությունով զբաղեցված 0.00165հա մակերեսով հողամասը նշված է նույն նպատակային և գործառնական նշանակության հողամաս: Հետևաբար ինքնակամ շինության օրինականացումը և իրավունքի պետական գրանցումը կարող է կատարվել ՀՀ <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 18.05.2006թ N912-Ն որոշման սահմանված կարգով և միայն հողամասի գործառնական նշանակության փոփոխությունից հետո:

Հաշվի առնելով վերոգրյալը, իրավունքի պետական գրանցում կատարելու նպատակով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14^3 հոդվածի, ՀՀ 2011թ դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի պահանջներով, ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստի քննարկմանը ներկայացնելու նպատակով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխության նախագծին /գլխավոր հատակագիծ/.

Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի 3/37 հասցեի 0.004հա /40.0քմ/ մակերեսով հողամասին կից՝ համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նպատակային նշանակության 0.00165հա /16.5քմ/ մակերեսով հողամասի /11-001-0111-0001-01 ծածկագրով հողամասի մի մաս/ գործառնական նշանակությունը ընդհանուր օգտագործման հողերից կազմից հանելու և հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի կազմի մեջ փոխադրելուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ	ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ	ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Աշխատակազմի քարտուղար՝ Բ.ԹԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Իջևան քաղաքային համայնքի ավագանի

ՈՐՈՇՈՒՄ

07 օգոստոսի 2018թ. N 36

ՆԱԽԱԳԻԾ

6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 11-001-0273-0001 ծածկագրով հողամասի մաս համարվող 5.0 հա մակերեսով հողամասը /Իջևանի Սպիտակ լիճ ջրամբարից արևելյան հատվածում/ ՀՀ կառավարության 06.10.2005թ թիվ 2417-Ն որոշմամբ նշված է պետական սեփականություն հանդիսացող անտառային հողեր: ՀՀ կառավարության 2006թ նոյեմբերի 30-ի թիվ 1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի գլխավոր հատակագծում նույնպես հողամասը նշված է որպես անտառային հողեր: Նշված հողամասի նպատակային նշանակությունը առաջարկվում է անտառայինից փոխադրել հատուկ պահպանվող տարածքների հողեր նպատակային և հանգստի համար նախատեսված գործառնական նշանակության հողամաս, և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասի, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14^3 հոդվածի, ՀՀ 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13 և 62 կետերի պահանջներով՝ ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստում քննարկելու համար, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ հավանություն ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխության նախագծին /գլխավոր հատակագիծ/՝

Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող 5.0 հա մակերեսով հողամասը /11-001-0273-0001 ծածկագրով հողամասի մի մաս/ պետական սեփականություն հանդիսացող անտառային հողամասերի կազմից հանելու և հատուկ պահպանվող տարածքների հողեր նպատակային նշանակության հողամասերի կազմի մեջ փոխադրելուն, գործառնական նշանակությունը՝ հանգստի համար նախատեսված:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ	ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ	ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Աշխատակազմի քարտուղար՝ **Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Իջևան քաղաքային համայնքի ավագանի

ՈՐՈՇՈՒՄ

07 օգոստոսի 2018թ. N 37

7. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն է ներկայացվել Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող, Անկախության թիվ 14 հասցեում գտնվող 2014.2քմ մակերես հողամասով 4558.9քմ ներքին մակերեսով վարչական շենքը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին որոշելու մասին:

Իջևան համայնքի ավագանին քննարկելով վերը նշվածը և ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18 հոդվածի 21-րդ կետի պահանջներով՝

Իջևան համայնքի ավագանին որոշում է

1. Տալ հավանություն, Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող, Անկախության թիվ 14 հասցեում գտնվող 2014.2քմ մակերես հողամասով 4558.9քմ ներքին մակերեսով վարչական շենքը աճուրդային կարգով օտարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հողամասի մեկնարկային գին սահմանելով 9000000 դրամ, շինության մեկնարկային գին սահմանելով 75000000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ	ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ	ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Աշխատակազմի քարտուղար՝ **Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Իջևան քաղաքային համայնքի ավագանի

ՈՐՈՇՈՒՄ

07 օգոստոսի 2018թ. N 38

8.ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով, օրենքով սահմանված կարգով՝ աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին:

Ղեկավարվելով,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետի և ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով՝ աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը համաձայն աղյուսակի.

հհ	Նպատակը	Հասցե	Մակերեսը/քմ
1	Հասարակական կառուցապատում	Երևանյան փ.	425.9
2	Հասարակական կառուցապատում	Երևանյան փ.	81.05
3	Գյուղատնտեսական նշանակության	Երևանյան փ.	203.5
4	Բնակելի կառուցապատում	Բլբուլյան փ.	45.5
5	Բնակելի կառուցապատում	Բլբուլյան փ.	38.35
6	Բնակելի կառուցապատում	Երևանյան փ.	400.0
7	Բնակելի կառուցապատում /ինք. անասնաշ/	Երևանյան փ.	316.9հող/181.02շին
8	Բնակելի կառուցապատում	Մեհրաբյան փ.	474.5
9	Բնակելի կառուցապատում	Արցախյան փ.	800.0
10	Բնակելի կառուցապատում /ինք. ավտ./	Բլբուլյան փ.	32.3հող/32.3շին
11	Բնակելի կառուցապատում /ինք. ավտ./	Մետաղագործների փ.	40.3հող/40.3շին
12	Բնակելի կառուցապատում /ինք. ավտ./	Սպանդարյան փ.	27.72հող/27.72շին
13	Ընդհանուր օգտագործում	Սպանդարյան փ.	33.5
14	Ընդհանուր օգտագործում	ՈՒսանողական փ.	52.71
15	Հասարակական կառուցապատում	Երևանյան փ.	338.7
16	Հասարակական կառուցապատում	Երևանյան փ.	19.68
17	Ընդհանուր օգտագործում	Արցախյան փ.	12.2
18	Ընդհանուր օգտագործում	Բլբուլյան փ.	19.8
19	Ընդհանուր օգտագործում	Մետաղագործների փ.	3x19.8
20	Ընդհանուր օգտագործում	Մետաղագործների փ.	14.4
21	Ընդհանուր օգտագործում	ՈՒսանողական փ.	96.0
22	Ընդհանուր օգտագործում	ՈՒսանողական փ.	50.0
23	Բնակելի կառուցապատում	Ս. Օհանյան փ.	120.0
24	Գյուղատնտեսական նշանակության	Երևանյան փ.	2959.9
25	Գյուղատնտեսական նշանակության	Երևանյան փ.	1500

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ	ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ	ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Աշխատակազմի քարտուղար՝ Բ.ԹԱՆԱՆՅԱՆ